«Հաստատում եմ»
Հայաստանի շախմատի ֆեդերացիայի
նախագահի առաջին տեղակալ՝ Ս.Լպուտյան
«28» « փետրվար » 2024թ.

Հայաստանի պատանիների առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի պատանիների առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարը կանցկացվի Հայաստանի շախմատի ակադեմիայում (հասցե՝ Շևչենկո 34, ք. Երևան, ՀՀ) ս/թ. մարտի 21-ից մարտի 31-ը:

Մրցաշարն անցկացվում է հետևյալ տարիքային խմբերով.

ա) մինչև 8 տարեկան (2015 թ. դեկտեմբերի 31-ից հետո ծնվածներ) պատանիներ

բ) մինչև 10 տարեկան (2013 թ. դեկտեմբերի 31-ից հետո ծնվածներ) պատանիներ

գ) մինչև 12 տարեկան (2011 թ. դեկտեմբերի 31-ից հետո ծնվածներ) պատանիներ

դ) մինչև 14 տարեկան (2009 թ. դեկտեմբերի 31-ից հետո ծնվածներ) պատանիներ

ե) մինչև 16 տարեկան (2007 թ. դեկտեմբերի 31-ից հետո ծնվածներ) պատանիներ

զ) մինչև 18 տարեկան (2005 թ. դեկտեմբերի 31-ից հետո ծնվածներ) պատանիներ

Մրցաշարն անցկացվում է ՖԻԴԵ-ի շախմատի կանոնների համաձայն, շվեյցարական մրցակարգով, 9 խաղափուլով: զ) մրցաշարը (մինչև 18 տարեկան պատանիներ), մասնակիցների քիչ քանակի դեպքում, հնարավոր է անցկացնել նաև շվեյցարական 7 խաղափուլով կամ շրջանային մրցակարգով:

Հավասար միավորներ վաստակելու դեպքում բոլոր մրցաշարերում տեղերը կորոշվեն ըստ.

1. հատված Բուխհոլց - 1 ցուցանիշի
2. գումարային Բուխհոլցի ցուցանիշի
3. սև գույնով խաղացած պարտիաների առավելագույն քանակի
4. հաղթանակների առավելագույն քանակի

Ժամակարգը՝ յուրաքանչյուր մասնակցի տրվում է 90-ական րոպե մինչև պարտիայի ավարտը՝ յուրաքանչյուր քայլի համար 30 վայրկյան հավելումով՝ սկսած առաջին քայլից:

Հայաստանի առաջնության ուղեգրեր: Հայաստանի պատանիների առաջնության եզրափակիչ փուլին մասնակցելու իրավունք կնվաճեն այն շախմատիստները, ովքեր իրենց տարիքային խմբերում կգրավեն հետևյալ տեղերը.

	Մինչև 8	Մինչև 10	Մինչև 12	Մինչև 14	Մինչև 16	Մինչև 18
Պատանիներ	12	12	10	7	7	3

Բացման արարողություն	23 մարտի, 11:30
1-ին խաղափուլ	23 մարտի, 12:00
2-րդ խաղափուլ	24 մարտի, 11:00
3-րդ խաղափուլ	25 մարտի, 11:00
4-րդ խաղափուլ	26 մարտի, 11:00
5-րդ խաղափուլ	27 մարտի, 11:00
6-րդ խաղափուլ	28 մարտի, 11:00
7-րդ խաղափուլ	29 մարտի, 11:00
8-րդ խաղափուլ	30 մարտի, 11:00
9-րդ խաղափուլ	31 մարտի, 11:00
Փակման արարողություն	31 մարտի, 17:00

- Խաղասկզբից ուշացման թույլատրելի ժամանակը սահմանվում է 30 րոպե:
- Խաղասրահ չի թույլատրվում ներկայանալ բջջային հեռախոսներով և սմարթ ժամացույցներով, հակառակ դեպքում խաղացողին կգրանցվի պարտություն:
- Մրցաշարի ընթացքում մարզերը ներկայացնող մասնակիցների և նրանց մարզիչների ծախսերը (ճանապարհածախս, հյուրանոց, օրապահիկ) հոգում է գործուղող կազմակերպությունը:

Մարզերի և Երևանի մարզադպրոցների հայտերն ուղարկել info@chessfed.am էլ. հասցեին՝ համաձայն սահմանված ձևաչափի: Երևանյան ընտրական փուլում ուղեգրեր նվաճած մասնակիցների տվյալները ևս ներառել հայտերում:

Հայտերի ընդունման վերջնաժամկետն է մարտի 15-ը:

Հարցերի դեպքում կարող եք զանգահարել 010/099/ 440105 հեռախոսահամարով:

Մրցաշարի գլխավոր մրցավար՝

/ ՄՄ Անուշավան Առաքելյան